ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

Food and Agriculture Organization of the United Nations

UNDP

ԾԻԼԻ ԾՈՎ

## ԵՄ «ՏԵՂԱՅԻ ԴԵՐԱԿԱՏԱՐՆԵՐԻ ԶՈՐԵՂԱՑՈՒՄ ՀԱՆՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԼՈՌՈՒ ԵՎ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԵՐՈՒՄ»

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

*Հայտարարության սույն տեքստը հաստատված է Ծիլի ծով ՏԱԽ-ի Համաժողովի 2023թ. սեպտեմբերի 07-ի N 05/23 որոշմամբ*

Ծիլի Ծով ՏԱԽ-ը Ռազմավարական գործողությունների 2022-2026թթ. ծրագրի շրջանակներում մարքեթինգային և սկսնակ նախաձեռնություններ խթանելու նպատակով հրավիրում է Տավուշի մարզի Բերդ համայնքի Բերդ քաղաքային, Տավուշ, Այգեպար, Ներքին Կարմիրաղբյուր, Վերին Կարմիրաղբյուր, Նորաշեն, Մոսեսգեղ, Զորաքան, Արծվաբերդ, Այգեձոր, Չինարի գյուղական բնակավայրի բնակիչներին և տարածքում գործող կազմակերպություններին ներկայացնել կարճաժամկետ և փոքր դրամաշնորհային մրցույթի մասնակցության նախաձեռնության հայտ (այսուհետ՝ Հայտ):

Դրամաշնորհային ծրագրով նախատեսվում է մինչև **600,000,00** (վեց հարյուր հազար) դրամի չափով ֆինանսական աջակցություն տրամադրել վերոնշյալ բնակավայրերում գրանցված կամ փաստացի գործունեություն իրականացնող ֆիզիկական և իրավաբանական անձանց՝ քաղաքացիական հասարակության, գործարար և հանրային ոլորտի ներկայացուցիչներին՝ սոցիալական, կրթական, սպորտային, բնապահպանական և այլ հարակից ոլորտներում համայնքային ծրագրեր իրագործելու նպատակով:

Դրամաշնորհի տեսակը՝ «Սաղմնային ֆինանսավորում»

Դրամաշնորհային ծրագրերի իրականացման առավելագույն տևողությունը՝ **1** ամիս**:**

Սույն մրցույթի անցկացման կարգը, հայտ կազմելու ու ներկայացնելու պայմանները և այլ մանրամասներ ներկայացված են կից Դրամաշնորհային մրցույթի մասնակցության Ուղեցույցում:

Դրամաշնորհային մրցույթին մասնակցության Հայտի ներկայացման վերջնաժամկետն է **2024**թ-ի ապրիլի **20**-ը, ժ. **21:00** (Երևանի ժամանակով):

Հայերեն լեզվով լրացված Հայտի էլեկտրոնային տարբերակը կարող եք ուղարկել tsili.tsov.lag@gmail.com էլ. հասցեին՝ վերնագրի տողում նշելով «Դրամաշնորհ- Սաղմնային ֆինանսավորում»», կամ Հայտի թղթային տարբերակը փակ ծրարով հանձնել ՏԱԽ-ի քարտուղարությանը (Բերդի կանանց ռեսուրս կենտրոն հիմնադրամ, ք. Բերդ, Դավիթ Անհաղթի 1): Հայտատուները կստանան փաթեթի ընդունման մասին համապատասխան ծանուցում:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել Ծիլի Ծով ՏԱԽ-ի կառավարիչ Անահիտ Բաղալյանին ՝ հեռ, +374 93 259493 կամ ՏԱԽ-ի քարտուղարությանը (Բերդի կանանց ռեսուրս կենտրոն հիմնադրամ, Դավիթ Անհաղթի 1, ք. Բերդ):

Կարող եք հարցերի դեպքում հաղորդագրություն ուղարկել Ծիլի Ծով ֆեյսբուքյան էջին՝ https://www.facebook.com/profile.php?id=100087578914025

# ԵՄ «ՏԵՂԱՑԻ ԴԵՐԱԿԱՏԱՐՆԵՐԻ ԶՈՐԵՂԱՑՈՒՄ ՀԱՆՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԼՈՌՈՒ ԵՎ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԵՐՈՒՄ»

## ՈՒՂԵՑՈՒՅՑ

## ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ

## ԾԻԼԻ ԾՈՎ ՏԱԽ

**2024**

Բովանդակություն


ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 4

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՄ «ՏԵՂԱՑԻ ԴԵՐԱԿԱՏԱՐՆԵՐԻ ԶՈՐԵՂԱՑՈՒՄ ՀԱՆՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԼՈՌՈՒ ԵՎ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԵՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ 4

ԾԻԼԻ ԾՈՎ ՏԱԽ-Ի ՏԱՐԱԾՔԸ, ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 5

ՈՎ ԿԱՐՈՂ Է ԴԻՄԵԼ 5

ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ, ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ 6

ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ 7

ԻՆՉՊԵ՞Ս ԴԻՄԵԼ 7

ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ 9

ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ 11

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳԾԱՊԱՏԿԵՐԸ 13

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ՀԱՅՏ 14

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դրամաշնորհային մրցույթին նախաձեռնության հայտ (այսուհետ՝ Հայտ) ներկայացնելու հրավերի նպատակն է աջակցել տեղական տնտեսական և համայնքային զարգացման նախաձեռնություններին՝ Ծիլի Ծով ՏԱԽ-ի Ռազմավարական գործողությունների 2022-2026թթ. ծրագրի (ՌԳԾ) շրջանակներում, մասնավորապես խթանել մարքեթինգային և սկսնակ ձեռնարկները՝ սոցիալական, մշակութային, սպորտային, բնապահպանական և հարակից այլ ոլորտներում

## ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՄ «ՏԵՂԱՑԻ ԴԵՐԱԿԱՏԱՐՆԵՐԻ ԶՈՐԵՂԱՑՈՒՄ ՀԱՆՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԼՈՌՈՒ ԵՎ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԵՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

ԵՄ «Տեղացի դերակատարների զորեղացում հանուն զարգացման Լոռու և Տավուշի մարզերում» (**«EU-LEAD4Lori and Tavush»,** այսուհետ Ծրագիր) ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից և իրականացվում է ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի կողմից՝ ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության գործընկերությամբ և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հետ սերտ համագործակցությամբ: Ծրագիրն աշխատում է նաև ՀՀ էկոնոմիկայի նախարարության հետ: Ծրագիրն իրականացվում է Հայաստանի Լոռու և Տավուշի մարզերում և նպատակ է հետապնդում տեղացի դերակատարներին ու բնակչությանն ակտիվորեն ներգրավել զարգացման գործընթացներում, ստեղծել տեղական զարգացմանն օժանդակող ենթակառուցվածքներ:

Ծրագիրն աջակցում է Լոռու և Տավուշի մարզերի բնակչությանը՝ տղամարդկանց, կանանց, երիտասարդներին, տարեցներին և քաղաքացիական խմբերին, ներառյալ փոքրամասնություններին ակտիվ դերակատարում ունենալ ներառական, ճկուն և կայուն տեղական զարգացման գործընթացում, որի նպատակն է տարածքային զարգացման մոդելների ստեղծումը՝ քաղաքացիներին ներգրավելով զարգացման օրակարգերի մշակման, որոշումների կայացման և իրականացման միջոցառումներում: Վերջինս հնարավոր է վստահության և ինքնավստահության ձևավորման, ձեռնարկատիրական վերաբերմունքի զարգացման և համայնքների ներսում ու մարզերի միջև խմբային միասնություն ձևավորելու միջոցով:

Ծրագրի առանցքը տարբեր շահագրգիռ կողմերի (քաղաքացիական հասարակություն, գործարար, հանրային) ամուր գործընկերությունն է, որի արդյունքում ձևավորվում է միջոլորտային և բազմաշահառու համագործակցություն՝ Տեղական ակտիվ խմբերի (ՏԱԽ) միջոցով: Վերջիններս հանդիսանում են LEADER/ՀԱՏԶ նախաձեռնությունների կարևորագույն դերակատարները և ձևավորվում են տեղական գործընկերների կողմից՝ «ներքևից վերև» սկզբունքով՝ տարածքային զարգացման համար պատասխանատվությամբ և գործում են որոշակի տարածքում՝ սահմանազատված ըստ տնտեսական, սոցիալ-մշակութային կամ այլ ընդհանրությունների, որոնք պատրաստում և համաձայնեցնում են տարածքային զարգացման ռազմավարությունները, և երկարաժամկետ կտրվածքով աջակցում են տեղական զարգացման գործընթացին:

## ԾԻԼԻ ԾՈՎ ՏԱԽ-Ի ՏԱՐԱԾՔԸ, ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Ծիլի Ծով ՏԱԽ-ը հրավիրում է Տավուշի մարզի Բերդ համայնքի Բերդ քաղաքային և Տավուշ, Այգեպար, Ներքին Կարմիրաղբյուր, Վերին Կարմիրաղբյուր, Նորաշեն, Մոսեսգեղ, Չորաթան, Արծվաբերդ, Այգեձոր, Չինարի գյուղական բնակավայրերում տեղական զարգացման նախաձեռնությունների իրագործման համար ներկայացնել դրամաշնորհային մրցույթի մասնակցության Հայտ:

Սույն դրամաշնորհային ծրագիրն ուղղված է Ծիլի Ծով ՏԱԽ-ի տարածքում խթանելու մարքեթինգային և սկսնակ ձեռնարկները՝ սոցիալական, մշակութային, սպորտային, բնապահպանական և հարակից այլ ոլորտներում, Ծիլի Ծով ՏԱԽ-ի Ռազմավարական գործողությունների 2022-2026թթ ծրագրի հետևյալ նպատակների շրջագծում

- Տեղական տնտեսության բազմազանեցված արժեշղթաների կայուն, ներառական զարգացում,
- Բնակչության արժանապատիվ կենսապայմաններ և կյանքի որակ,
- Տարածքի ճանաչելիություն և զբոսաշրջային գրավչություն:

## Ո՞Վ ԿԱՐՈՂ Է ԴԻՄԵԼ

Հայտատուները բացառապես պետք է լինեն Ծիլի Ծով ՏԱԽ-ի տարածքից՝ Տավուշի մարզի Բերդ համայնքի Բերդ քաղաքային, Տավուշ, Այգեպար, Ներքին Կարմիրաղբյուր, Վերին Կարմիրաղբյուր, Նորաշեն, Մոսեսգեղ, Զորաքան, Արծվաբերդ, Այգեձոր, Չինարի գյուղական բնակավայրերում գրանցված և գործող բնակիչներ/կազմակերպություններ կամ դրանց միություններ/խմբեր:

- ՏԱԽ-ի քաղաքացիական հասարակությունից՝
  - ա) պետական գրանցում ունեցող հասարակական կազմակերպությունները և հիմնադրամները,
  - բ) ՏԱԽ-ի տարածքի բնակիչ հանդիսացող ֆիզիկական անձինք/ֆերմերները, ոչ ֆորմալ խմբերը,
  - գ) ակադեմիական/ կրթական հաստատությունները,
  - դ) եկեղեցի/կրոնական կազմակերպությունները:
- ՏԱԽ-ի գործարար ոլորտից՝
  - ա) սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները,
  - բ) բաժնետիրական ընկերությունները,
  - գ) կոոպերատիվները, այդ թվում՝ գյուղատնտեսական,
  - դ) անհատ ձեռնարկատերերը:
- ՏԱԽ-ի հանրային ոլորտից՝
  - ա) տեղական ինքնակառավարման մարմինները,
  - բ) ՏԻՄ-երի կողմից հիմնադրած համայնքային ոչ առևտրային կազմակերպությունները (ՀՈԱԿ) և հիմնադրամները,
  - գ) Հանրակրթական ուսումնական և առողջապահական հաստատությունները (ՊՈԱԿ):

**ԿԱՐԵՎՈՐ՝**

Դրամաշնորհային ծրագիրը չի ֆինանսավորի.
- Քաղաքական կուսակցություններին,
- Ֆինանսական հաստատություններին,
- Ծրագրի նախկին շահառուներին:

Սույն Ծրագրին հատկապես խրախուսվում է կանանց և խոցելի խմբերի (պատերազմի մասնակից, երիտասարդ, բազմազավակ ընտանիքներ, կին գլխավոր կամ հաշմանդամ ունեցող ընտանիքներ, միայնակ մայրեր, կերակրողին կորցրած ընտանիք և այլն) մասնակցությունը:

## ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ, ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ

Հայտերում առաջարկվող գործողությունները պետք է իրականացվեն Ծիլի Ծով ՏԱԽ-ի տարածքում՝ Տավուշի մարզի Բերդ համայնքի Բերդ քաղաքային, Տավուշ, Այգեպար, Ներքին Կարմիրաղբյուր, Վերին Կարմիրաղբյուր, Նորաշեն, Մոսեսգեղ, Զորաքան, Արծվաբերդ, Այգեձոր, Չինարի գյուղական բնակավայրերում:

Հայտատուի կողմից ներկայացված նախաձեռնության տևողությունը չպետք է գերազանցի մեկ ամիսը:
Նախաձեռնության մեկնարկը համարվելու է դրամաշնորհային պայմանագրի կնքման օրը:

Ծիլի Ծով ՏԱԽ-ը իրավասու է իրականացնել պարբերական մշտադիտարկում՝ նախաձեռնության իրականացման գործընթացի արդյունավետությունը և նպատակայնությունը գնահատելու համար:

## ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Սույն Ծրագրի պայմաններում դրամաշնորհները հատկացվում են ՏԱԽ-ի տարածքի զարգացմանն ուղղված քաղաքացիական, գործարար և հանրային տեղական նախաձեռնությունների իրականացման համար:

- Քաղաքացիական և հանրային նախաձեռնությունների նպատակն է խթանել տեղական համայնքային զարգացումը առանց շահույթ հետապնդելու:
- Գործարար նախաձեռնությունները կարող են ունենալ շահույթ հետապնդելու նպատակ:
- Տրամադրվող դրամաշնորհի չափը մեկ նախաձեռնության համար սահմանված է մինչև 600,000.00 (վեց հարյուր հազար) դրամ
- Դրամաշնորհային նախաձեռնությունները պահանջում են պարտադիր համաֆինանսավորում.

    - Քաղաքացիական և հանրային ոլորտներից ստացված Հայտերի դեպքում շահառուի ներդրումը կազմում է նախաձեռնության ընդհանուր բյուջեի առնվազն 20 %-ը, որից 10 %-ը՝ բնեղեն:
    - Գործարար ոլորտից ստացված Հայտերի դեպքում շահառուի ներդրումը կազմում է նախաձեռնության ընդհանուր բյուջեի առնվազն 40%-ը, որից 20 %-ը՝ բնեղեն:

Ցանկացած ներդրում և դրա հետ կապված ծախսեր, որոնք տեղի են ունեցել մինչև պայմանագրի կնքումը, ենթակա չեն փոխհատուցման:

Դրամաշնորհային մրցույթը հաղթելու դեպքում ֆիզիկական անձինք կամ ոչ ֆորմալ կազմակերպությունները պարտադիր պետք է գրանցվեն որպես իրավաբանական անձ կամ ԱՁ: Պայմանավորված նոր գրանցված իրավաբանական անձի տեսակով (շահույթ հետապնդող կամ շահույթ չհետապնդող) կամ ԱՁ կարգավիճակով, շահառուի համաֆինանսավորման չափը կլինի դրան համապատասխան (քաղաքացիական հասարակության կամ գործարար ոլորտին համապատասխան)։

Հայտատուն կարող է ավելացնել իր կողմից իրականացվող ներդրման տոկոսը, որը ենթակա է քննարկման ընտրության գործընթացում։

## ԻՆՉՊԵ՞Ս ԴԻՄԵԼ

Դրամաշնորհային մրցույթին մասնակցելու համար հարկավոր է պատրաստել հայտադիմումի փաթեթ և ներկայացնել ՏԱԽ-ին։

Հայտադիմումի փաթեթը պետք է ներառի հետևյալ փաստաթղթերը[1]՝

1. Լրացված հայտ (հավելված 1),
2. Անձնագիր կամ նույնականացման քարտ (կրկնօրինակ),
3. Իրավակազմակերպական ձևի պետական գրանցման փաստաթուղթ,
4. Հարկային հաշվետվություն նախորդ տարվա գործունեության մասին (եթե հայտատուն կազմակերպություն է),
5. Պարտքեր չունենալու մասին հայտարարություն (ACRA հաշվետվություն)։

## ԿԱՐԵՎՈՐ

[1] Շինարարության/վերակառուցման թույլտվություն՝ համաձայն գործող ազգային օրենսդրության կպահանջվի Ծրագրին ավարտական փուլ անցնելու դեպքում:

Հայտատուն դրամաշնորհային մրցույթի Հայտում կարող է ներկայացնել ոչ ավել, քան մեկ ծրագիր-առաջարկ:

Ծրագիրը չի ֆինանսավորելու հետևյալ ծախսատեսակները՝ հարկեր, պարտքեր, աշխատավարձեր, հողամասերի և առկա շենքերի գնման, վարձակալության ծախսեր կամ լիզինգ, օգտագործված սարքավորումների ձեռքբերման ծախսեր, բանկային վճարներ, արտարժույթի փոխարժեքի կորուստներ, կոմունալ ծախսեր, համաձայնագրի կնքման գործընթացից առաջ կատարված ծախսեր, դրամաշնորհային միջոցներով գնված ցանկացած գույքի օգտագործման և պահպանման հետ կապված ծախսեր:

Հայտատուն պատասխանատու է հետագայում, ծրագրի իրականացման փուլում ծագած ցանկացած հարկերի, տուրքերի, սոցիալական կամ ապահովագրական ծախսերի փոխհատուցման համար: Տվյալ ծախսերը չեն համարվում հայտատուի կողմից կատարված ներդրումներ՝ սույն դրամաշնորհին դիմելիս:

Հայտի ձևաչափը կարող եք ձեռք բերել ՏԱԽ-ի մենեջերից, ներբեռնել «EU-LEAD4Lori and Tavush» ծրագրի, Տավուշի մարզպետարանի, Բերդ համայնքի և ՏԱԽ-ի ֆեյսբուքյան էջերից:

Դրամաշնորհային մրցույթին մասնակցության Հայտերի ներկայացման վերջնաժամկետն է **2024**թ-ի ապրիլի **20**-ը, ժ. **21:00** (Երևանի ժամանակով):

Հայերեն լեզվով լրացված Հայտի էլեկտրոնային տարբերակը կարող եք ուղարկել tsili.tsov.lag@gmail.com էլ. հասցեին՝ վերնագրի տողում նշելով «Դրամաշնորհ-Սաղմնային ֆինանսավորում», կամ թղթային տարբերակը փակ ծրարով հանձնել ՏԱԽ-ի քարտուղարությանը (Բերդի կանանց ռեսուրս կենտրոն հիմնադրամ): Հայտատուները կստանան փաթեթի ընդունման մասին համապատասխան ծանուցում:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել Ծիլի Ծով ՏԱԽ-ի մենեջեր՝ Անահիտ Բաղալյանին ՝ հեռ. +374 93 259493 կամ ՏԱԽ-ի քարտուղարությանը (Բերդի կանանց ռեսուրս կենտրոն հիմնադրամ, Դավիթ Անհաղթի 1, ք. Բերդ):

Կարող եք հարցերի դեպքում հաղորդագրություն ուղարկել Ծիլի Ծով ֆեյսբուքյան էջին՝ https://www.facebook.com/profile.php?id=100087578914025

## ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Հայտերը գնահատվելու են մի քանի փուլերով:

1. Հայտերի նախնական զննում

Հայտերի նախնական զննումն իրականացվելու է ՏԱԽ-ի Գնահատող հանձնաժողովի կողմից՝ սույն ուղեցույցում ներառված տեխնիկական գնահատման չափանիշներին համապատասխան: Տվյալ փուլի նպատակն է գնահատել հայտի ամբողջականությունը և համապատասխանությունը:

Նախնական զննման ժամանակ ուսումնասիրվում է Հայտերի համապատասխանությունը բոլոր տեխնիկական (ֆորմալ) չափանիշներին: Պահանջվող ձևաչափին անհամապատասխան և ոչ լիարժեք փաստաթղթերով Հայտերը մերժվում են և դուրս են մնում գնահատման հետագա գործընթացից: Տեխնիկական չափանիշներին բավարարած Հայտերը ներառվում են կարճ ցուցակում:

| Հ/հ | Տեխնիկական գնահատում | Գնահատում (1-այո, 0-ոչ) |
|---|---|---|
| 1. | Լրացված և ստորագրված հայտ | |
| 2. | Անձնագիր կամ նույնականացման քարտ (կրկնօրինակ) | |
| 3. | Իրավակազմակերպական ձևի պետական գրանցման փաստաթուղթ | |

| | | |
|---|---|---|
| 4. | Հարկային հաշվետվություն նախորդ տարվա գործունեության մասին, (կազմակերպության դեպքում) | |
| 5. | Պարտքեր չունենալու մասին հայտարարություն (ACRA հաշվետվություն) | |

## 2. Հայտերի բովանդակային գնահատում

Կարճ ցուցակում ընդգրկված Հայտերի բովանդակային գնահատումը ՏԱԽ-ի Գնահատող հանձնաժողովի կողմից իրականացվում է բալային համակարգով:

Հայտը հաղթող ճանաչվելու համար, պետք է հավաքի նվազագույնը 75 միավոր (100-ից), այդ թվում՝ առանց որևէ չափանիշի զրոյական միավորի:

### ՀԱՅՏԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

| | Չափանիշներ | Առավելագույն բալը | Բնութագիր |
|---|---|---|---|
| 1. | Նախաձեռնության ընդհանուր համապատասխանությունը (50 միավոր) | | |
| 1.1. | Արդյո՞ք ներկայացված նախաձեռնությունը համապատասխանում է ՏԱԽ-ի Ռազմավարական գործողությունների ծրագրի շրջանակին՝ որպես համայնքային, սոցիալական, մշակութային, սպորտային, բնապահպանական և հարակից այլ ոլորտներում իրագործվող մարքեթինգային և սկսնակ ձեռնարկ | 20 | |
| 1.2. | Արդյո՞ք նախաձեռնությունը ստեղծում է նոր աշխատատեղեր կամ նոր բիզնես (առևտրային ձեռնարկների համար[2]) | 10 | |
| 1.3. | Արդյո՞ք նախաձեռնությունը դրական է ազդում ՏԱԽ-ի տարածքի կամ գյուղի կյանքի որակին (համայնքային, սոցիալական, մշակութային, սպորտային, բնապահպանական և հարակից այլ ոլորտներում ոչ առևտրային ձեռնարկների համար[3]) | 10 | |
| 1.4. | Արդյո՞ք նախաձեռնությունը նորարարական է և օգտագործում է էկոլոգիապես մաքուր պրակտիկա | 5 | |
| 1.5. | Արդյո՞ք նախաձեռնությունը աջակցում է տեղական գործընկերությանը | 5 | |
| 2. | Նախաձեռնության իրագործելիությունը (15 միավոր) | | |
| 2.1. | Ներկայացված նախաձեռնությունը իրականացնելու համար դիմորդն ունի որոշ փորձ և գիտելիքներ | 5 | |
| 2.2. | Նախաձեռնության իրականացման պլանը հստակ է, և արդյունքին հասնելու համար նախատեսվող գործողությունները կավարտվեն նախատեսված ժամկետներում | 10 | |
| 3. | Նախաձեռնության կայունությունը (20 միավոր) | | |
| 3.1. | Նախաձեռնության ազդեցությունը հիմնավորված է հաշվարկներով և տեղական շահառուների թվով | 10 | |
| 3.2. | Հիմնավորված է նախաձեռնության շարունակականությունը հաջորդ տարիների ընթացքում և հնարավոր կրկնօրինակումը | 10 | |
| 4. | Ֆինանսական չափանիշներ (15 միավոր) | | |
| 4.1. | Բյուջեն հիմնավորված է և իրատեսական | 10 | |
| 4.2. | Համաֆինանսավորման աղբյուրներն ապացուցված են և հիմնավորված | 5 | |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | **100** | |

Հավասար միավորների դեպքում ՏԱԽ-ը առավելություն կտա ներառական ծրագրերին (գենդերային հավասարություն, սոցիալական ներգրավվածություն, և այլն)

- Նախաձեռնության համապատասխանությունը (50 միավոր)

[2] Շահույթ հետապնդող կազմակերպությունների համար
[3] Շահույթ չհետապնդող կազմակերպությունների համար

Նախաձեռնությունը համարվում է համապատասխան այն դեպքում, երբ այն անդրադառնում է Ծիլի Ծով ՏԱԽ-ի Ռազմավարական գործողությունների ծրագրում ամրագրված ռազմավարական նպատակներին, և առաջնահերթ խնդիրների նորարարական լուծմանը, համայնքային, սոցիալական, մշակութային, սպորտային, բնապահպանական և հարակից այլ ոլորտներին, նոր տեխնոլոգիաների կիրառմանը, նպաստում է շրջակա միջավայրի պաշտպանությանը, կլիմայի փոփոխության ադապտացմանը և/կամ մեղմացմանը, նորարարական է և համապատասխանում է էկոլոգիապես մաքուր պրակտիկայի նորմերին, աջակցում է տեղական գործընկերությանը:

- Նախաձեռնության իրագործելիությունը **(15** միավոր**)**

Նախաձեռնությունը համարվում է իրագործելի այն դեպքում, երբ դիմորդի նախկին փորձը և գիտելիքները բավարար են այն իրականացնելու համար, իսկ նախաձեռնությունը իրատեսական է իրականացնել նախատեսվող ժամկետում և առաջարկվող միջոցներով՝ նվազագույն ռիսկերի պայմաններում:

- Նախաձեռնության կայունությունը **(20** միավոր**)**

Նախաձեռնությունը համարվում է կայուն այն դեպքում, եթե նրա ձեռք բերված դրական արդյունքներն ու ազդեցությունները հնարավորություն են տալու ապահովել կայուն շարունակականություն և կրկնօրինակում գալիք տարիների ընթացքում: Նախաձեռնությունը բարձր միավորներ կհավաքի, եթե այն համարվի զարգացման այնպիսի ձեռնարկ, որը ռազմավարական առումով տվյալ տարածքի համար կունենա զարգացման պոտենցիալ և կրկնվելու մեծ հավանակություն:

- Ֆինանսական չափանիշներ **(15** միավոր**)**

Նախաձեռնությունը համարվում է ֆինանսական չափանիշներին համապատասխան այն դեպքում, երբ բյուջեն հիմնավորված է և իրատեսական, ապահովված են ողջամիտ ֆինանսական կանխատեսումներ, ապացուցված և հիմնավորված են համաֆինանսավորման աղբյուրները:

## 3. Հայտերի վերջնական հաստատում

Հայտերի վերջնական թեկնածուների հաստատումն իրականացվում է ՏԱԽ-ի Համաժողովի կողմից՝ ըստ ՏԱԽ-ի Գնահատող հանձնաժողովի գնահատման արդյունքների:

## 4. Հաստատված Հայտերի վավերացում

ՏԱԽ-ի Համաժողովի կողմից հաստատված Հայտերը ՏԱԽ-ի Քարտուղարության կողմից ներկայացվում է Դոնորական իրավասու հանձնաժողովին՝ վերջնական վավերացման համար:

Վավերացված Հայտերի դիմումատուներին ծանուցումն իրականացվում է ՏԱԽ Քարտուղարության կողմից:

# ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Դրամաշնորհային պայմանագրերը կնքվում են հաղթող թեկնածուների հետ, և միջոցները փոխանցվում են տվյալ շահառուների բանկային հաշվին: Շահառուն օգտագործում է դրամաշնորհային պայմանագրում ներկայացված միջոցները և տրամադրում է իրականացված վավերացման փաստաթղթերը ՏԱԽ-ի Քարտուղարությանը:

Դրամաշնորհի համար, շահառուն պետք է բացի առանձին բանկային հաշիվ, ինչը թույլ կտա հետևել դրամաշնորհային միջոցների օգտագործման գործընթացին: Տվյալ հաշվեհամարին շահառուն համաֆինանսավորման իր մասնաբաժինը պետք է փոխանցի ոչ ուշ, քան պայմանագիրը ստորագրելուց հետո երկու օրվա ընթացքում: Դրամաշնորհային միջոցների հատկացումն իրականացվում է միանվագ կամ փուլերով՝ կախված ծրագրի բնույթից և ֆինանսավորման չափից: Մասնաբաժնի փոխանցումից երկու օրվա ընթացքում ՏԱԽ-ի

Քարտուղարությունը դրամաշնորհային ծրագրի իրականացման համար բացված հաշվեհամարին կփոխանցի պայմանագրով նախատեսված դրամաշնորհային գումարը ըստ նախապես հաստատված և պայմանագրին կցված ժամանակացույցի։

Համաձայն ՏԱԽ-ի Քարտուղարության հետ կնքված դրամաշնորհային պայմանագրի, շահառուի պարտավոր է կատարել  հարկային բոլոր վճարումները։

Մինչ դրամաշնորհային համաձայնագրի կնքումը կատարված ծախսերը չեն համարվում որպես շահառուի կողմից կատարած ներդրում: Փոխհատուցման ենթակա են միայն այն ներդրումներն ու վճարումները, որոնք կատարվել են դրամաշնորհային համաձայնագրի կնքումից հետո: Ավարտական ֆինանսական և ծրագրային հաշվետվությունը ՏԱԽ-ի քարտուղարություն պետք է ներկայացվի համաձայնագրի ավարտից հետո՝ մեկ շաբաթվա ընթացքում:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

- Ֆիզիկական անձ կամ ֆիզիկական անձանց  խումբ հանդիսացող հայտատուներին դրամաշնորհ կտրամադրվի միայն այն դեպքում, երբ վերջիններս կգրանցվեն որպես իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր։

Դրամաշնորհային մրցույթի համար Հայտերի ներկայացման վերջնաժամկետն է **2024**թ-ի ապրիլի **20**-ը, ժ. **21:00** (Երևանի ժամանակով):

Հայերեն լեզվով լրացված հայտի էլեկտրոնային տարբերակը կարող եք ուղարկել tsili.tsov.lag@gmail.com էլ. հասցեին՝  վերնագրի տողում նշելով «Դրամաշնորհ-Սաղմնային փոնդ», կամ հայտի թղթային տարբերակը  փակ ծրարով հանձնել ՏԱԽ-ի քարտուղարությանը (Բերդի կանանց ռեսուրս կենտրոն հիմնադրամ)։ Հայտատուները կստանան փաթեթի ընդունման մասին համապատասխան ծանուցում։

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել Ծիլի Ծով ՏԱԽ-ի մենեջեր՝ Անահիտ Բադալյանին ՝ հեռ, +374 93 259493 կամ ՏԱԽ-ի քարտուղարությանը (Բերդի կանանց ռեսուրս կենտրոն հիմնադրամ, Դավիթ Անհաղթի 1,  ք. Բերդ)։

Կարող եք հարցերի դեպքում հաղորդագրություն ուղարկել Ծիլի Ծով ֆեյսբուքյան էջին՝ https://www.facebook.com/profile.php?id=100087578914025

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳԾԱՊԱՏԿԵՐԸ



ԵՄ «ՏԵՂԱՅԻ ԴԵՐԱԿԱՏԱՐՆԵՐԻ ԶՈՐԵՂԱՑՈՒՄ ՀԱՆՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԼՈՌՈՒ ԵՎ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԵՐՈՒՄ»

ԾԻԼԻ ԾՈՎ ՏԱԽ

# ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ՀԱՅՏ

Ներկայացման վերջնաժամկետ՝ 2024թ–ի ապրիլի 20–ը–ը, ժ. 21:00 (Երևանի ժամանակով)

| Ընդհանուր տեղեկություններ | |
|---|---|
| Հայտատուի ամբողջական անվանումը (անձ (անուն ազգանուն)<br>կամ կազմակերպություն (անվանում)) | |
| Հայտատուի հիմնական բնակության վայրը (կազմակերպության դեպքում՝ գրանցման և գործունեության հասցեն ) | |
| Կոնտակտային տվյալներ (հեռախոս, էլ. փոստ) | |
| Կազմակերպության դեպքում՝ իրավակազմակերպական ձևը | |
| Գործունեության սկիզբը (ամսաթիվ)՝ | |
| Գրանցված աշխատողների թիվը՝ | |
| Գործունեության ոլորտը (անձ/ կազմակերպություն) | |

| Տեղեկություններ ներկայացվող նախաձեռնության մասին | |
|---|---|
| Ներկայացվող նախաձեռնության անվանումը,համառոտ նկարագրություն (մինչև 200 բառ)՝ | |

| | |
|---|---|
| Համայնքը/բնակավայրը, որտեղ պլանավորվում է իրականացնել ներկայացվող նախաձեռնությունը | |
| Թիրախային խումբը/ շահառուների թիվը | |
| Ներկայացվող նախաձեռնության իրականացման տևողությունը, շաբաթ | |
| Հայտատուի սեփական դրամական ներդրումը՝ | _____________ դրամ<br>Ներդրումների աղբյուրը /այլ եկամուտ՝<br>☐ Խնայողություններ<br>☐ Վարկեր<br>☐ Այլ (նշել) _______________ |
| Ակնկալվող դրամաշնորհային ներդրում՝ «EU-LEAD4Loriand Tavush» - ից՝ | ______________ դրամ |
| Նախաձեռնության ընդհանուր բյուջեն՝ | ______________ դրամ |
| Նախաձեռնությունը Տեղական զարգացման ռազմավարական ո՞ր նպատակին է պատկանում | ☐Տեղական տնտեսության բազմազանեցված արժեշղթաների կայուն, ներառական զարգացում,<br>☐Բնակչության արժանապատիվ կենսապայմաններ և կյանքի որակ,<br>☐Տարածքի ճանաչելիություն և զբոսաշրջային գրավչություն: |
| Համառոտ կերպով նկարագրեք այն կարիքները, որոնց լուծմանն ուղղված է ներկայացվող նախաձեռնությունը (մինչև 300 բառ): | |
| Նշեք դրամաշնորհի նպատակը և նկարագրեք այն արդյունքը (արդյունքները), որոնց ակնկալվում է հասնել նախաձեռնության իրականացման ավարտին (մինչև 300 բառ): | |
| Նկարագրեք այն գործողությունները, որոնք իրականացվելու են պլանավորված նպատակներին հասնելու համար (մինչև 200 բառ): | |
| Ինչպիսի՞ ազդեցություն կունենա ներկայացվող նախաձեռնությունը թիրախային խմբերի, շրջակա միջավայրի, գենդերային հավասարության և սոցիալական ներառման վրա (մինչև 100 բառ): | |
| Նկարագրեք ինչպե՞ս է նախաձեռնությունը աջակցում տեղական գործընկերությանը (մինչև 100 բառ): | |

**ԲՅՈՒՋԵ, հազար դրամ**

| Հ/հ | Գործողություն | Սեփական կանխիկ ներդրում | Սեփական բնեղեն ներդրում | Դրամաշնորհ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| 1. | | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 2. | | | | | |
| 3. | | | | | |
| 4. | | | | | |
| 5. | | | | | |
| 6. | | | | | |

## ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/հ | Գործողություն | Շաբաթ | | | |
|---|---|---|---|---|---|
| | | I | II | III | IY |
| 1. | | | | | |
| 2. | | | | | |
| 3. | | | | | |
| 4. | | | | | |
| 5. | | | | | |
| 6. | | | | | |

## ՌԻՍԿԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Նշեք այն ռիսկերը, որոնք կարող են առաջանալ նախաձեռնության իրականացման ճանապարհին և դրանց մեղմացման կամ վերացման միջոցառումները: Ռիսկերը կարող են ներառել անվտանգության, ֆինանսական, գործառնական, սոցիալական և բնապահպանական կամ այլ ռիսկեր:

| Ռիսկ | Ռիսկի աստիճանը (Բարձր/Միջին/Ցածր) | Մեղմացման միջոցառումները |
|---|---|---|
| | | |
| | | |
| | | |

Հայտատու

Անուն Ազգանուն ____________________________________

Ստորագրություն _______________________________________________

Կնիք (կազմակերպության դեպքում)